ԽՍՀՄ-Ի ՄԱՐՏՆՉՈՂ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԽՈՐՀՈՒՐԴ

Մ-22

# ՀՐԱՀԱՆԳ

## ՄԱՄ-Ի ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՄԱՄ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՅԵՐԵՎԱՆ 1938

Թարգմանությունը խմբագրեց՝ Ս. ՈԳԱՆԵՋՈՎ
Թարգմանիչ՝ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գլավլիտի լիազոր՝ Ա.—4059 Պատ. № 611. Տիրաժ 10.000

«Խ. Հ» հրատ. տպարան, Երևան

31 JAN 2018

# I. ՄԱՄ-ի ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Մարտնչող անաստվածների միությունը աշխատավորների կամավոր կազմակերպություն է, որը իրեն նպատակ է դրել՝ հետևողական պայքար մղել հավատացյալների գիտակցության միջից կրոնական մնացորդները վերացնելու համար: ՄԱՄ-ն այդ պայքարը մղում է հավատացյալներին սիստեմատիկաբար բացատրելով կրոնի վնասները, նրա հակագիտական էությունը և մերկացնելով ռեակցիոն հոգևորականության գործունեությունը:

2. Նշված խնդրի իրագործման համար ՄԱՄ-ը՝

ա) լայնորեն օգտագործում է հակակրոնական պրոպագանդայի ազատության իրավունքը, որ ԽՍՀՄ բոլոր քաղաքացիների համար ապահովված է Ստալինյան Սահմանադրությունով:

բ) Բջիջներ է կազմակերպում ֆաբրիկաներում, գործարաններում, տրանսպորտում, խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում, զինվորական մասերում, ուսումնական հաստատություններում, հիմնարկություններում, տնային վարչություններին, հանրակացարաններին կից և այլն.

գ) Հակակրոնական աշխատանքի մեջ է ներգրավում կուսակցական ու անկուսակցական պրոպագանդիստների, ագիտատորների և ակտիվիստների լայն կադրերը՝ բանվորներին, գյուղացիներին ու խորհրդային ինտելիգենցիայի — բժիշկների, ագրոնոմների, ուսուցիչների, պրոֆեսորների, տեխնիկների, ինժեներների և այլն.

դ) Հակակրոնական պրոպագանդա յե մղում մասսայական դասախոսություններ, զեկուցումներ, անհատական զրույցներ կազմակերպելու ուղիով, կազմակերպում է խմբակներ ու բարձրաձայն ընթերցանություններ, այդ նպատակով օգտագործում է կինոն, թատրոնները, ռադիոն, մամուլը, թանգարանները և այլն:

ե) Հակակրոնական կադրեր է պատրաստում կուրսերի, սե-

մինարների, խմբակների և այլ միջոցներով,

գ) Հրատարակում է հակակրոնական գրականություն (ժուռնալներ, թերթեր, բրոշյուրներ, գրքեր), կազմակերպում է նրա տարածումն ու օգտագործումը:

## II. ՄԱՄ-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3· ՄԱՄ-ի բջջի անդամ կարող են լինել յուրաքանչյուր աշխատավոր և նրա ընտանիքի անդամները, ովքեր կապերը կտրել են կրոնի ու կրոնական կազմակերպությունների հետ և ցանկանում են ակտիվորեն հակակրոնական աշխատանք կատարել: ՄԱՄ-ի յուրաքանչյուր անդամ ՄԱՄ-ի գծով վորոշ պարտականություն է կատարում: Դպրոցական տարիքի յերեխաների մեջ, վորոնք 14 տարեկանին չեն հասել, մասսայական հ/կ պրոպագանդը տարվում է դպրոցներում ու պիոներջոկատներում, առանց նրանց ՄԱՄ-ի անդամ լինելու:

4· ՄԱՄ-ի անդամի ընդունելությունը կատարվում է անհատական կարգով, ՄԱՄ-ի բջջի ընդհանուր ժողովում:

## III. ՄԱՄ-Ի ԲՋԻՋԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ

5· ՄԱՄ-ի սկզբնական կազմակերպությունը հանդիսանում է ՄԱՄ-ի բջիջը:

6· Խոշոր ձեռնարկություններում, գործարաններում, խորհտնտեսություններում, ՄՏ կայաններում, ԲՈՒՀ-երում և հիմնարկություններում թույլատրվում է կազմակերպել ՄԱՄ-ի ցեխային բջիջներ, յեթե նրանցից յուրաքանչյուրում կա առնվազն 10 մարդ : Այն դեպքում, յերբ ցեխային բջիջների թիվը 5-ից ավելի յե, ՄԱՄ-ի շրջխորհրդի հետ համաձայնեցնելով կարելի յե կազմակերպել տվյալ ձեռնարկության ՄԱՄ-ի խորհուրդը: Ինչպես և ՄԱՄ-ի բջիջը, յենթարկվում է ՄԱՄ-ի շրջխորհրդին կամ քաղխորհրդին:

7. ՄԱՄ-ի բջիջն, կազմակերպվում է (առնվազն 3 մարդ լինելու դեպքում) կուսակցական, կոմյերիտական, պրոֆմիութենական կազմակերպությունների, ինչպես և առանձին անաստվածների նախաձեռնությամբ:

8· ՄԱՄ-ի կազմակերպչական ժողովի օրակարգում, վորպես կանոն, դրվում են հետեվյալ հարցերը:

ա) զեկուցում ՄԱՄ-ի նպատակների ու խնդիրների մասին, բ) ՄԱՄ-ի անդամների ընդունելություն, գ) բջջի բյուրոյի (կամ կազմակերպչի) և վերստուգիչ հանձնաժողովի ընտրություններ: Կազմակերպչական ժողովի արձանագրությունը ներկայացվում է ՄԱՄ-ի շրջխորհրդին՝ ի հաստատություն:

9· ՄԱՄ-ի անդամի ընդունելությունը կատարում է բջջի բյուրոն, վորից հետո հաստատվում է ՄԱՄ-ի բջջի ընդհանուր ժողովում, անհատական կարգով, ձայների մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

10· ՄԱՄ-ի բջջի աշխատանքի ամենօրյա ղեկավարության համար ընդհանուր ժողովն ընտրում է՝

ա) 10-ից պակաս ՄԱՄ-ի անդամ լինելու դեպքում ՄԱՄ-ի բջջի կազմակերպիչ,

բ) 10-ից ավելի ՄԱՄ-ի անդամ լինելու դեպքում բջջի բյուրո՝ բաղկացած 3-5 մարդուց,

գ) խոշոր ձեռնարկություններում, վորոնք մի քանի ցեխային բջիջ ունեն (տես սույն հրահանգի § 6-ը) — ՄԱՄ-ի խորհուրդ՝ բաղկացած 5-7 մարդուց:

11. Ավելի քան 10 անդամ ունեցող ՄԱՄ-ի բջջի գործունեության վրա հսկելու համար ընդհանուր ժողովն ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, բաղկացած 3 մարդուց:

12· Բջջի բոլոր ղեկավար մարմինները (կազմակերպիչ, բյուրո, վերստուգիչ հանձնաժողով) ընտրվում են ձայնի մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, 1 տարի ժամանկով,

13· Իր ամբողջ գործունեության մեջ բջջի բյուրոն (կազմակերպիչը) յենթակա յե անդամների ընդհանուր ժողովին և նրանց առաջ հաշիվ է տալիս առնվազն տարին 2 անգամ:

14· ՄԱՄ-ի բջջի ընդհանուր ժողովը հաստատում է բջջի բյուրոյի աշխատանքի պլանը, վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները, նոր անդամների ընդունելություն է կատարում, քննարկում է հ/կ աշխատանքի առանձին հարցեր, ՄԱՄ-ի ան-

ԱԶԳԱՅԻՆ
1-37779գր

դամի կուշմանն անարժաններին վտարում է ՄԱՄ-ից և այլն:

ժողովները հրավիրվում են առնվազն ամսական մեկ անգամ:

## IV. ՄԱՄ-Ի ԲՋԻՋԻ ԲՅՈՒՐՈՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. ՄԱՄ-ի բջջի բյուրոյի (կազմակերպչի կամ ՄԱՄ-ի խորհրդի) աշխատանքի հարցերի շրջանակի մեջ են մտնում.

ա) սիստեմատիկաբար հ/կ պրոպագանդայի կազմակերպումը նախ և առաջ հավատացյալների մեջ ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ՄՏԿ-ներում, խորհտնտեսություններում, հիմնարկության մեջ, հանրակացարանում, տնային վարչությունում, սեզոնայինների մեջ, կոլտնտեսականների ու մենատնտեսների մեջ և այլն,

բ) նոր անդամների ներգրավումը ՄԱՄ-ի բջջի մեջ,

գ) հակակրոնական կադրերի պատրաստումը,

դ) ՄԱՄ-ի առանձին անդամների զեկուցումների քննարկումը՝ նրանց կատարած աշխատանքի մասին,

ե) ՄԱՄ-ի շրջխորհրդի հետ կապ պահելը և նրա առաջադրանքների կատարումը,

զ) իր ժամանակին անդամավճար, դրոշմանիշներ (մարկաներ), ձեռք բերելը,

է) յուրաքանչյուր քառամսյակում սահմանված ձևով ու պլանով շրջխորհրդին հաշվետվություն ներկայացնելը,

ը) բջջի աշխատանքի պլաններ կազմելը և նրանց կատարման հսկողությունը,

թ) ֆինանսական հաշվետվության վարումը:

16. ՄԱՄ-ի բջջի բյուրոյի անդամների աշխատանքը կարող է բաշխվել մոտավորապես այսպես՝ 1) բջջի պատասխանատու քարտուղար, նույն ինքը մասսայական աշխատանքի կազմակերպիչ, 2), գանձապահ, 3), ակտիվի պատրաստման ու հաշվառման կազմակերպիչ, 4) հ/կ մամուլի բաժանորդագրման կազմակերպիչ և 5) ինֆորմատոր՝ կիրառվող միջոցառումների մասին: Պարտականությունների բաշխումը բյուրոն կատարում է բաց քվեարկությամբ:



## V. ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱԿՏԻՎԻ ՄԵՋ

17. ՄԱՄ-ի բջիջը պետք է կազմակերպի, դաստիարակի ու աճեցնի հակակրոնական ակտիվ — կազմակերպիչներ, պրոպագանդիստներ, զրուցավարներ, խմբակավարներ, ագիտատորներ: Առանց ակտիվի գոյության հակակրոնական աշխատանքը բջիջում բազմակողմ կերպով ծավալվել չի կարող:

18. Բջիջը հակակրոնական աշխատանքի մեջ է ներգրավում իր կոլտնտեսության կամ ձեռնարկության կուլտուրական ուժերին — ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին, տեխնիկներին՝ օգնելով նրանց սիստեմատիկաբար բարձրացնել իրենց հ/կ մակարդակը և օգտագործելով նրանց հ/կ պրոպագանդայի և ագիտացիայի գծով:

19. Յուրաքանչյուր բջջին կից պետք է աշխատի հ/կ խմբակ, որի նպատակը պիտի լինի ՄԱՄ-ի բջջի անդամների գիտելիքների մակարդակի բարձրացումը, որպեսզի նրանք ավելի ակտիվ աշխատեն հավատացյալների մեջ: Այդ նույն նպատակով պետք է կազմակերպվեն դասախոսություններ ու զեկուցումներ:

20. Հ/կ խմբակների ղեկավարներին առանձնացնում է բջիջը՝ ՄԱՄ-ի ամենապատրաստված անդամներից և հաստատում է ՄԱՄ-ի շրջխորհուրդը:

21. Մասսայական հ/կ դասախոսություններ կարդալ թույլատրվում է միայն այն աշխատողներին, որոնք հաստատվել են ՄԱՄ-ի շրջխորհրդի կողմից:

22. Հ/կ խմբակների համար հիմնական ձեռնարկ է հանդիսանում «Հակակրոնական դասագիրքը» և հ/կ խմբակների համար կազմած ծրագրերը, որ հրապարակել է ԽՍՀՄ ՄԱՄ-ի կենտխորհուրդը:

23. ՄԱՄ-ի ավելի պատրաստված անդամների համար կազմակերպվում են բարձր տիպի սեմինարներ ու կուրսեր՝ կիրառելով անհատական առաջադրանքների մեթոդը: Բացի այդ, բջիջն այդպիսի ընկերներին ուղարկում է ՄԱՄ-ի շրջխորհրդի կազմակերպած կուրսերն ու սեմինարները:

# VI. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ

24. ՄԱՄ-ի բջջի հիմնական խնդիրն է՝ հավատացյալների մեջ հ/կ պրոպագանդա կազմակերպել համբերատար ու համառ բացատրական աշխատանքով հասնել այն բանին, որ հավատացյալները հեռանան կրոնից:

Այդ նպատակով հարկավոր է լայնորեն գործադրել անհատական աշխատանքի մեթոդը յուրաքանչյուր հավատացյալի հետ և խմբակային ագիտացիայի մեթոդը՝ հավատացյալների մեջ:

25. Բջիջն ամենից առաջ պետք է իմանա, թե տվյալ ձեռնարկության մեջ ո՛վ է հավատացյալ, ինչու՞մն են կայանում նրա կրոնական համոզմունքները: Այդ բանը կարելի յե պարզել ընկերական զրույցների միջոցով:

26. Բջիջը հավատացյալի հետ աշխատանք տանելը հանձնարարում է ստուգված, կայուն անաստվածի: Նրա խնդիրն այն է, որ հավատացյալին ցույց տա կրոնական մնացորդների անհեթեթությունն ու վնասակարությունը, նրան համոզել հաճախելու հ/կ դասախոսությունների ու յերեկոների, հ/կ գրականություն կարդալուն: Անհատական ագիտացիայի վերջնական նպատակն է հասնել այն բանին, որ հավատացյալը հեռանա կրոնից ու կրոնական կազմակերպություններից:

# VII. ՄԱՄ-Ի ԲՋԻՋԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

27. Մասսայական աշխատանքի ընթացքում պետք է օգտագործել այնպիսի ձևեր, ինչպիսիք են դասախոսությունը, զեկուցումը, զրույցը, էքսկուրսիան, հ/կ գրականության կոլեկտիվ ընթերցանությունը: Բջիջը պետք է հոգ տանի, որ հ/կ դասախոսություններին և յերեկոներին ներգրավի ամենից առաջ հավատացյալներին: Դասախոսներ պետք է հրավիրել կամ ՄԱՄ-ի շրջխորհրդի միջոցով և կամ օգտագործել իր ստուգված ու պատրաստված ուժերը:

28. Ընթերցանությունները պետք է կատարել ինչպես աշխատանքից ազատ ժամանակ, այնպես էլ ճաշի ընդմիջման ժամին՝ արտադրությունում, բրիգադներում, դպրոցում, ընթերցարաններում, ակումբներում, հանրակացարաններում, կարմիր անկյուններում, տնային վարչություններում և ընտանիքներում: Ընթերցանության նյութ կարող են ծառայել «Բեզբոժնիկ» ժուռնալն ու թերթը, «Սպուտնիկ ագիտատորա»-ն, հ/կ գեղարվեստական յերկերի ժողովածուները և հակակրոնական այլ գրականություն:

29. Բջիջը մասսայական էքսկուրսիաներ է կազմակերպում դեպի թանգարանները, գյուղատնտեսական փորձակայանները, ցուցահանդեսները և այլն:

Այնուհետև էքսկուրսիայի նյութերը պետք է օգտագործել դասախոսությունների ու զրույցների համար, իսկ էքսկուրսանտների տպավորությունները պետք է լուսաբանվեն պատի թերթերում: Բացի հ/կ բնույթի հատուկ էքսկուրսիաներից, բջիջը պետք է օգտագործի նաև պրոֆմիությունների, ակումբների կազմակերպած ամեն տեսակի մասսայական էքսկուրսիաները՝ նրանց մեջ մտցնելով հակակրոնական մոմենտներ, ինչպես օրինակ՝ համառոտ զրույցներ, գեղարվեստական հ/կ յելույթներ (յերգ, արտասանություն, յերգիծանք և այլն):

30. ՄԱՄ-ի բջջի ամբողջ մասսայական աշխատանքը պետք է կառուցված լինի այնպես, որ նա կոնկրետ, օպերատիվ բնույթ կրի: Այդ նշանակում է, որ ՄԱՄ-ի բջիջը պետք է իմանա, թե տվյալ վայրում ինչպիսի կրոնական մնացորդներ կան և նախ և առաջ դրանք մերկացնի իր աշխատանքով, իմանա թշնամու գործունեյությունը և իր ամենօրյա աշխատանքով հակահարված տա նրան: Բջիջն իր աշխատանքի արդյունքը պետք է գնահատի նրանով, թե նա քանի հավատացյալի անհավատ է դարձրել:

Ծանոթություն — Այն ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում, խորհտնտեսություններում, որտեղ տարբեր ազգությունների բանվորներ ու կոլտնտեսականներ են աշխատում, ՄԱՄ-ի բջիջը նրանց մեջ աշխատանք է կատարում հաշվի առնելով յուրաքանչյուր ազգության ու կրոնի առանձնահատկությունները:

# VIII. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՁԵՎԵՐ

31. ՄԱՄ-ի բջիջը ակումբների կամ խրճիթ-ընթերցարանների միջոցով պետք է կազմակերպի հ/կ ներկայացումներ, ինսցենի-

րովկաներ, համերգներ, ինքնագործունեության յերեկոներ և այլն:

Այդպիսի յերեկոների համար վորպես նյութ պետք է օգտագործել հ/կ գեղարվեստական ժողովածուները, նյութերը և պիեսները: Միաժամանակ բջիջը պետք է այնպես անի, վոր հ/կ նյութերը մտցվեն ակումբի կամ խրճիթ-ընթերցարանի ամբողջ աշխատանքի մեջ:

32. ՄԱՄ-ի բջիջը տեղական ռադիո հանգույցը (գործարանի, ակումբի, ՄՏԿ-ի, կոլտնտեսության ռադիոհանգույցը) օգտագործում է դասախոսություններ, զրույցներ, ինչպես և հ/կ ինսցենիրովկաներ, համերգներ հաղորդելու համար:

Ռադիո հաղորդումների պլանը նախապես հաստատվում է կուսկազմակերպության կողմից:

## IX. „ԱՆԱՍՏՎԱԾԻ ԱՆԿՅՈՒՆ“

33. ՄԱՄ-ի բջիջը կազմակերպում է «Անաստվածի անկյուն»: Անկյան նպատակն է՝ աշխատավորների ուշադրությունը գրավել կրոնի դեմ պայքարելու հարցերի վրա:

Անաստվածի անկյունը հիմնականում պետք է արտացոլի հակակրոնական աշխատանքը տվյալ ձեռնարկությունում, խորհտնտեսությունում, կոլտնտեսությունում, ՄՏ կայանում, հանրակացարանում, տնային վարչությունում և այլն: Բայց դրա հետ միասին անկյունում պետք է լուսաբանվեն նաև հ/կ պրոպագանդայի ընդհանուր հարցերը:

Անկյան համար նյութեր կարող են լինել՝ լուսանկարներ, «Անտիրելիգիոզնիկ» և «Բեզբոժնիկ» ժուռնալներից կտրված նկարներ, ծաղրանկարներ, թղթակցություններ և հոդվածներ, թերթերից և ժուռնալներից վերցրած լոզունգներ ու թղթակցություններ, տվյալ ձեռնարկության մեջ ՄԱՄ-ի բջջի աշխատանքի մասին կազմած դիագրամներ ու թղթակցություններ և այլն:

Ծանոթություն. Լուսանկարների և դիապոզիտիվների (մոգական լապտեր) կոմպլեկտ, և ուրիշ օժանդակ նյութեր կարելի յե դուրս գրել ՄԱՄ-ի Կենտրոնական Խորհրդից, Կենտրոնական հակակրոնական թանգարանից և «Սոյուզֆոտոյից»:

34. Անկյունում կախվում են հակակրոնական պրոպագանդա-



յի վերաբերյալ հանձնարարվող գրքերի և հոդվածների ցուցակները: Այնտեղ էլ պետք է կազմակերպված լինի կոնսուլտացիա հակակրոնական հարցերի վերաբերյալ. և ՄԱՄ-ի բջջի ակտիվիստների հերթապահություն: Յեթե ՄԱՄ-ի բջիջը լույս է ընծայում պատի թերթը, ապա այն ևս պետք է կախել անկյունում:

35. Անկյունում յեղած նյութերը պետք է հրատապ լինեն և առնվազն 1-2 տասնօրյակը մեկ պետք է փոփոխվեն: Վոչ մի դեպքում անկյունում չպետք է տեղավորել այնպիսի նյութեր, վորոնք իրենց սրությամբ կարող են հավատացյալներին հեռացնել հ/կ պրոպագանդայից:

## X. ՀԱՇՎԱՌՄԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

36. ՄԱՄ-ի յուրաքանչյուր բջիջ պետք խնամքով իր աշխատանքի հաշվառում կատարի հետևյալ բաժիններով. ՄԱՄ-ի անդամների թիվը, նրանց կազմն ըստ սեռի, ըստ տարիքի, ըստ կուսակցության, ըստ սոցիալական դրության, ըստ ազգության, ըստ կրթության: Տվյալներ անդամավճարների մուծումների մասին ըստ յեռամսյակների: Խմբակներում անցած պարապմունքների թիվը և նրանց ունկնդիրների թիվը: Ունեցած դասախոսությունների, զեկուցումների, զրույցների, ընթերցանությունների և այլ հակակրոնական միջոցառումների թիվը: Տեղեկություններ հակակրոնական գրականության տարածման մասին: Տվյալներ՝ կրոնական մնացորդների կամ կրոնականների գործունեության մասին տվյալ կոլտնտեսությունում կամ ձեռնարկությունում: Տվյալներ՝ կրոնից հավատացյալների հեռանալու մասին:

37. Հաշվառումն ու ինֆորմացիան կատարվում է սիստեմատիկաբար «Հաշվառման տետրակում», գրանցումներ անելով: ՄԱՄ-ի անդամների հաշվառումը կատարվում է հատուկ հաշվառման քարտերի հիման վրա:

38. ՄԱՄ-ի բջիջն իր գործունեության մասին յեռամսյա հաշվետվություններ է ներկայացնում ՄԱՄ-ի շրջխորհրդին: Կրոնականների գործունեությունից ամենից հետաքրքիր փաստերը բջիջները պետք է իրենց ամենօրյա ագիտացիոն օգտագործեն

աշխատանքում յեկեղեցականների և աղանդավորների (սեկտանտների) ռեակցիոն գործունեությունը մերկացնելու նպատակով։ Բջիջը պետք է իր աշխատանքի մասին սիստեմատիկաբար համառոտ տեղեկություններ տեղավորի տեղական պատի թերթում կամ բազմատիրաժում։

## XI. ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՄԱՄ-Ի ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՅԵՎ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

39. ՄԱՄ-ի յուրաքանչյուր անդամի համար կազմվում է յերկու հաշվառման քարտ։ Մեկը պահվում է բջիջում, և նրա վրա բոլոր անհրաժեշտ նշումներն են արվում, մյուսը հանձնըվում է ՄԱՄ-ի շրջխորհրդին, վորտեղ և պահվում է։ Յերբ ՄԱՄ-ի անդամը փոխադրվում է ուրիշ ձեռնարկություն, բջիջում պահվող հաշվառման քարտը տրվում է ՄԱՄ-ի անդամի ձեռքը, վորի մասին բջջի բյուրոն տեղյակ է դարձնում ՄԱՄ-ի շրջխորհրդին։

Ծանոթություն.— Յուրաքանչյուր բջիջ հաշվառման քարտերն ստանում է ՄԱՄ-ի շրջխորհրդից։

40. ՄԱՄ-ի անդամատոմսեր տալիս է ՄԱՄ-ի շրջխորհուրդը համաձայն այն հաշվառման քարտերի թվի, վոր ներկայացնում է բջիջը իր անդամների մասին, ժողովի արձանագրության հետ, և պահվում են խիստ պատասխանատու փաստաթղթերին հավասար։

41. ՄԱՄ-ի բջիջը հանձնված անդամատոմսերը գրանցում է մի մատյանում, վորի մեջ տոմս ստացողն ստորագրում է։

## XII. ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ, ՄՈՒԾԱՆՔՆԵՐԻ ՅԵՎ ԲՋԻՋԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

42. ՄԱՄ-ի յուրաքանչյուր անդամ մուտքի և անդամավճար է տալիս հետևյալ չափերով.

Ա. Մուտքի վճարներ

1). ԲԳԿԲ և նավատորմի շարքային կազմի համար 5 կ.

2). ՄԱՄ-ի մյուս բոլոր անդամների համար 15 կ.



Բ. Անդամավճարներ

1-ին խումբ — տեխնիկումներում և բուհերում սովորողներ, ԲԳԿԲ և նավատորմի շարքային կազմը յեռամսյակում 15 կոպ. տարեկան՝ 60 կոպ.

2-րդ խումբ — դրամական աշխատավարձ չստացողները (կոլտնտեսականներ, տնտեսուհիներ) յեռամսյակում 30 կ. տարեկան 1ռ. 20 կ.

3-րդ խումբ — բանվորներ, ծառայողների ԲԳԿԲ և նավատորմի հրամկազմ

ա) ամսական մինչև 150 ռ. ստացողները յեռամսյակում 30կ. տարեկան 1 ռ. 20 կ.

բ) ամսական 151-300 ռ. ստացողները յեռամսյակում 75 կ. տարեկան 3 ռ.

գ) 300 ռ. ավելի ստացողները յեռամսյակում 1 ռ. 25 կ. տարեկան 5 ռ.

ՄԱՄ-ի անդամատոմսի արժեքը, վճարվում է տոմսն ստանալիս։

Ինտերնացիոնալ մուծումներ (ծախսվում է ազատամարտիկների միջազգային միության աշխատանքների վրա, ՄԱՄ-ը մտնում է այդ միության մեջ) գանձվում են ՄԱՄ-ի բոլոր անդամներից, առնվազն տարեկան 10 կոպեկի չափով։

Ծանոթ.— Ինտերնացիոնալ մուծումը ՄԱՄ-ի այս կամ այն անդամի ցանկությամբ կարելի յե նաև տարեկան 10 կոպեկից ավելի կատարել և համարվում է սովորական կարգով։

43. Մուտքի, անդամակցական և ինտերնացիոնալ մուծումները մարվում են անդամատոմսի մեջ հատուկ մարկաներ փակցնելով։ Միաժամանակ վճարված գումարը գրանցվում է ՄԱՄ-ի անդամի հաշվառման քարտի համապատասխան յեռամսյակի աղյուսակում։ (Անդամակցական մարկաներ բջիջները ձեռք են բերում ՄԱՄ-ի շրջխորհուրդներում)։

44. Մուտքի վճարները գանձվում են անդամատոմսը հանձնելիս։ Ինտերնացիոնալ մուծումը կատարվում է անդամավճարի վճարման հետ միաժամանակ ընթացիկ տարվա առաջին յեռամսյակի համար (ինտերնացիոնալ մուծումը առաջին անգամ վճարվում է անդամատոմսն ստանալիս)։

45. Անդամավճարները գանձվում են ըստ յեռամսյակների յուրաքանչյուր յեռամսյակի սկզբում, ըստ վորում յուրաքանչյուր յեռամսյակի մուծումների գանձումն պետք է ավարտվի ամենաուշը 1 ամսում (I յեռամսյակի համար հունվարին, II յեռամսյակինը՝ ապրիլին, III յեռամսյակինը՝ հուլիսին, IV յեռամսյակինը՝ հոկտեմբերին):

46. Մուծումների գանձումը կատարում է ՄԱՄ-ի բջջի բյուրոյի անդամը կամ քարտուղարը:

47. Բջիջը շրջխորհրդին մարկաների և անդամատոմսերի պատվեր է տալիս: Պատվերում նշում է ՄԱՄ-ի բջջի անդամների փաստացի թիվը, բաժանելով նրանց ըստ վճարողների խմբերի:

48. Բջջի միջոցները կազմվում են այն գումարներից, վոր հ|կ աշխատանքի համար առանձնացնում են պրոֆմիութենական և այլ կազմակերպությունները:

Ծանոթ.— Բջջին արգելվում է առևտրական բնույթի միջոցառումներ կազմակերպել:



ՀՀ Ազգային գրադարան
NL0936754

3 — ДЕК 1938

557

I
3777

Գ Ի Ն Ը 30 ԿՈՊ.

Инструкция по работе городских и деревенских ячеек СВБ

на армянском языке